

Հարգելի քաղաքացի, սիրելի բարեկամ,

Տեղեկացնում ենք, որ վերջին օրերին մեր հասարակությունը հզոր պայքար է ծավալվել Սերժ Սարգսյանի ապօրինի իշխանության դեմ: Ժողովուրդն արդեն իսկապես հոգնել է անարդար մթնոլորտից, համատարած թալանից: **Մեր նպատակն է Սերժ Սարգսյանին իշխանությունից հեռացնելը և այնպիսի իշխանության հաստատումը, ինչպիսին որ ժողովուրդը կուզի տեսնել:**

Մեր պայքարի հաջողությունը կախված է յուրաքանչյուրիցս, և ամեն մեկս կարող է իր լուծան ներդնել Հայաստանում արդարություն հաստատելու գործում: **Հարկ է պարզապես**

1. համատարած գործադուլ և դասադուլ անել՝ անկախ հիմնարկի կամ ուսումնական հաստատության տեսակից

2. դուրս գալ փողոց և միանալ տասնյակ հազարավոր մարդկանց, որոնք արգելափակում են ճանապարհներն ու կամուրջները

3. երեկոյան մասնակցել հանարհավաքներին, որոնք տեղի են ունենում Հանրապետության կամ Ֆրանսիայի հրապարակներում:

4. Բանկերից ժամանակավոր հանել Ձեր գումար, եթե իհարկե ունեք, և պարզապես կանխիկով պահել տանը կամ գրպանում:

5. Ինքնուրույն մտածել խաղաղ պայքարի միջոցներ և կիրառել դրանք:

Բոլորս էլ քաջ գիտակցում ենք, որ վերը նշված գործողությունները կարող են ժամանակավոր անհարմարություն և տհաճություն պատճառել, բայց

ավելի լավ է մի քանի օր դիմանալ և պայքարել, քան ևս հինգ տարի կրել Սերժ Սարգսյանի ապօրինի իշխանության ծանր բեռը: Այժմ Երևանում և Հայաստանի մի շարք այլ քաղաքներում համերաշխության և համախմբվածության մթնոլորտ է տիրում ցուցարանների շրջանում, և դժուր է կարող ես մինալ մեզ. **սիրով սպասում ենք:**

Բազմացրո՛ւ այս թռուցիկը և փոխանցի՛ր քո ընկերներին, ծանոթներին և անծանոթներին

Հարգելի ոստիկան,

Մեր պայքարն ուղղված է միայն Սերժ Սարգսյանի և նրա ապօրինի իշխանության դեմ և ոչ մի խնդիր չունի Ձեր կամ

Ձեր կառույցի հետ: Մենք հասկանում ենք, որ մեր խնդրանքը ծանր է, բայց, այդուամենայնիվ, խնդրում ենք չկատարել ցուցարարների դեմ ուղղված ապօրինի հրամանները և ոչ մի տեսակի բռնության կամ սադրանքի չգնալ: Դա կօգնի մեղմել Ձեր և Ձեր կառույցի նկատմամբ կուտակված անվստահությունն ու ատելությունը, ինչը հետագայում կդառնա Ձեր իսկ անվտանգության երաշխիքը: Մենք հասկանում ենք, որ հարաման չկատարելը կարող է խնդիրներ առաջ բերել Ձեր հետագա կարիերայի համար, բայց հարկ է հաշվի առնել, որ **Դուք ինքներդ Սերժ Սարգսյանի իշխանության զոհն եք**, որովհետև նրանք ձեզ ստիպում են աշխատել ցածր աշխատավարձով և կատարել ապօրինի արարքներ՝ ուժ կիրառել խաղաղ ցուցարարների դեմ: Մինչդեռ, **Ձեր ուղիղ պարտականությունը տարբեր ոլորտներում տիրող ապօրինությունները կանխելն է:** Ի վերջո, ձեզանից շատերը ցուցարարների թվում կտեսնեն իրենց հարևանին, ընկերոջը և, ինչու ոչ, տանեցիներին. հո չե՞ք դուրս գալու Ձեր հարազատների դեմ:

Այժմ փողոցներում գտնվող խելացի և ըմբոստ երիտասարդությունը Հայաստանի ապագան են և, հարված հասցնելով այդ երիտասարդներին, Դուք կհարվածեք մեր երկրի ապագային: Ինչպես ասում են՝ «Հայը հային չի խփի», բայց այս ժողովրդական խոսքը հարկ է հիշել և կիրառել բոլոր դեպքերում, այլ ո՛չ ընտրողաբար:

Խաղաղություն և բերեկեցություն բոլորիս: